ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03-2»

ք. Սպիտակ «06» 04 2026թ.

Սպիտակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ք. Նիկողոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի և «ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Ս. Հարությունյանի, (այսուհետ երկուսը միասին՝ Կապալառու) որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև՝ 09.03.2026 թվականին կնքված համատեղ գործունեության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 7 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգախնայող միջոցառումների կիրառման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _7_ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 44989488 (քառասունչորս միլիոն ինը հարյուր ութսունինը հազար չորս հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, որից 7498248 (յոթ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար երկու հարյուր քառասունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
4	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[1]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242188010
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
L.S

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1
«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ Լոռու մարզ, գ. Կաթնաջուր 8 Փ/Տ7
ՀՎՀՀ՝ 06974941
Բանկը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ՝ 163138091356
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

Գործընկեր-2
«ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մ. Ավետիսյան փ.29, բն.54
ՀՎՀՀ՝ 05551314
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1570070960900100
Տնօրեն՝ Ս. Հարությունյան
Լիազորված անձ՝ Ա. Մանուկյան

Ա. Մանուկյան ----------
/ստորագրություն/
L.S

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«06» 04 2026թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ 7 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ս.Ավետիսյան 7/1 շենք

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիքի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ			0.000	0.00
1	Թիթեղյա տանիքածածկի քանդում այդ թվում հարթ թիթեղ,ջրհորդանի թիթեղ /250+24+47,7/մ2	մ²	321.7	0.151	48.45
2	Ջրատար խողովակների քանդում	գմ	31.800	0.167	5.30
3	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ³	7.2	36.260	261.07
4	Շլաքի շերտի քանդում	մ³	10.200	6.346	64.73
5	Տանիքում գոյություն ունեցող աղբի և շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	9.520	2.850	27.14
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0.000	0.00
1	Տանիքածածկի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան նյութով	1մ² մեկուսացվող մակերես	209.260	0.515	107.84
2	Ջերմամեկուսացում 70մմ հաստ.պեռլիտե սալերով	մ²	209.260	3.544	741.69
4	Փայտյա 120x120մմ չորսուներից նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի հենարանների տեղադրում	մ³	0.203	249.988	50.75
5	9մմ հաստ նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի պատրաստում	մ²	6.00	3.854	23.12
6	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում	մ³	5.1320	241.479	1239.27
7	Տանիքածածկույթի պատրաստում КП-21-0,5մմ գունավոր g/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	մ²	250.0	10.471	2617.81
8	Կավարամածի,տախտակ 50x50 -	մ³	1.0500	173.068	181.72
9	Գագաթի տախտակի տեղադրում 250x50	մ²	7.96	9.550	76.02
10	Ջրհորդանի տախտակի տեղադրում 300x50	մ²	19.08	9.550	182.21
11	Ջրհորդանների պատրաստում գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ	գմ	132.00	9.320	1230.24
12	Ջրահեռացման խողովակ 150x150 մմ, գունավոր հարթ ցինկապատ թիթեղից L=11,0մ	կ-տ	4.0	50.945	203.78
13	Գագաթի հարթ ցինկապատ թիթեղ գունավոր 0,5մմ հաստ.	մ²	6.00	6.061	36.36
14	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	61.60	6.061	373.34
15	Ջրատարների տակ եզրակալ գունավոր հարթ ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ.	մ²	15.60	6.061	94.55

16	Մանր ծածկույթներ գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	4.26	6.061	25.82
17	Ձնարգել ցինկապատ գունավոր L=1250մմ	հատ	20.00	4.569	91.38
18	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ³	5.1320	10.911	56.00
19	Կավարամածի, ջրհորդանի,գագաթի տախտակների հակահրդեհային պաշտպանություն	մ²	294.00	0.354	104.10
20	Կավարամածի,ջրհորդանի, գագաթի տախտակների պատում հականեխիչ նյութով	մ²	294.00	1.073	315.37
	Օդափոխության հորանի ծածկոց 2հատ			0.000	0.00
1	Հորանի ծածկոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.02622	112.144	2.94
2	35x35x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	11.000	0.875	9.63
3	50x5 շերտապողպատի արժեքը,	գմ	6.000	1.113	6.68
4	Հարթ գունավոր թիթղ 0,5մմ հաստ. արժեքը,	մ²	2.200	3.990	8.78
5	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	3.000	1.201	3.60
6	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	5.60	6.061	33.94
	Տանիքի մտոց			0.000	0.00
1	Մտոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.01600	115.686	1.85
2	700x700x3 պողպատյա թիթեղի արժեքը,	մ²	0.50	14.849	7.42
3	30x30x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.190	0.504	1.61
4	50x50x5 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.200	1.676	5.36
5	Փական	հատ	1.000	3.708	3.71
6	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	2.100	1.201	2.52
	Տանիքի անվտանգության ճաղաշար 31գմ			0.000	0.00
1	Անվտանգության ճաղաշարի տեղադրում	գմ	31.00	0.187	5.79
2	50x5շերտապողպատի արժեքը,	գմ	23.3	1.113	25.87
3	Φ15x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	62.0	0.846	52.42
4	Φ20x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	31.0	0.935	28.97
5	Հեղույս L=220մմ	հատ	62.0	0.748	46.35
6	Ռետինե տափօղակ՝ d=30.0 մմ	հատ	62.0	0.323	20.05
7	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	7.130	1.201	8.56
	Տանիքի պատուհան			0.000	0.00
1	Պատուհանների պատրաստում	հատ	2.000	62.774	125.55
	Ընդամենը	**100.00**	**%**		**8559.65**
	ԱԱՀ	**20%**			1711.93
	Ընդամենը				**10271.580**

Ս. Ավետիսյան 7/2 շենք

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6

	Տանիքի շին. վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ			0.000	0.00
1	Թիթեղյա տանիքածածկի քանդում այդ թվում հարթ թիթեղ, ջրհորդանի թիթեղ /250+24+47,7/մ2	մ²	321.7	0.151	48.45
2	Ջրատար խողովակների քանդում	·մ	31.800	0.167	5.30
3	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ³	7.2	36.260	261.07
4	Շլաքի շերտի քանդում	մ³	10.200	6.346	64.73
5	Տանիքում գոյություն ունեցող աղբի և շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	9.520	2.850	27.14
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0.000	0.00
1	Տանիքածածկի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան նյութով	1մ² մեկուսացվող մակերես	209.260	0.515	107.84
2	Ջերմամեկուսացում 70մմ հաստ. պեռլիտե սալերով	մ²	209.260	3.544	741.69
4	Փայտյա 120x120մմ չորսուներից նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի հենարանների տեղադրում	մ³	0.203	249.988	50.75
5	9մմ հաստ նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի պատրաստում	մ²	6.00	3.854	23.12
6	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում	մ³	5.1320	241.479	1239.27
7	Տանիքածածկույթի պատրաստում ԿՊ-21-0,5մմ գունավոր g/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	մ²	250.0	10.471	2617.81
8	Կավարամածի, տախտակ 50x50 -	մ³	1.0500	173.068	181.72
9	Գազաթի տախտակի տեղադրում 250x50	մ²	7.96	9.550	76.02
10	Ջրհորդանի տախտակի տեղադրում 300x50	մ²	19.08	9.550	182.21
11	Ջրհորդանների պատրաստում գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ	գմ	132.00	9.320	1230.24
12	Ջրահեռացման խողովակ 150x150 մմ, գունավոր հարթ ցինկապատ թիթեղից L=11,0մ	կ-տ	4.0	50.945	203.78
13	Գազաթի հարթ ցինկապատ թիթեղ գունավոր 0,5մմ հաստ.	մ²	6.00	6.061	36.36
14	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	61.60	6.061	373.34
15	Ջրատարների տակ եզրակալ գունավոր հարթ ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ.	մ²	15.60	6.061	94.55
16	Մանր ծածկույթներ գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	4.26	6.061	25.82
17	Ձնարգել ցինկապատ գունավոր L=1250մմ	հատ	20.00	4.569	91.38
18	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ³	5.1320	10.911	56.00
19	Կավարամածի, ջրհորդանի,գազաթի տախտակների հակահրդեհային պաշտպանություն	մ²	294.00	0.354	104.10
20	Կավարամածի,ջրհորդանի, գազաթի տախտակների պատում հականեխիչ նյութով	մ²	294.00	1.073	315.37
	Օդափոխության հորանի ծածկոց 2հատ			0.000	0.00

1	Հորանի ծածկոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.02622	112.144	2.94
2	35x35x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	11.000	0.875	9.63
3	50x5 շերտապողպատի արժեքը,	գմ	6.000	1.113	6.68
4	Հարթ գունավոր թիթեղ 0,5մմ հաստ. արժեքը,	մ²	2.200	3.990	8.78
5	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	3.000	1.201	3.60
6	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	5.60	6.061	33.94
	Տանիքի մտոց			0.000	0.00
1	Մտոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.01600	115.686	1.85
2	700x700x3 պողպատյա թիթեղի արժեքը,	մ²	0.50	14.849	7.42
3	30x30x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.190	0.504	1.61
4	50x50x5 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.200	1.676	5.36
5	Փական	հատ	1.000	3.708	3.71
6	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	2.100	1.201	2.52
	Տանիքի անվտանգության ճաղաշար 31գմ			0.000	0.00
1	Անվտանգության ճաղաշարի տեղադրում	գմ	31.00	0.187	5.79
2	50x5շերտապողպատի արժեքը,	գմ	23.3	1.113	25.87
3	Φ15x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	62.0	0.846	52.42
4	Φ20x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	31.0	0.935	28.97
5	Հեղույս L=220մմ	հատ	62.0	0.748	46.35
6	Ռետինե տափօղակ՝ d=30.0 մմ	հատ	62.0	0.323	20.05
7	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	7.130	1.201	8.56
	Տանիքի պատուհան			0.000	0.00
1	Պատուհանների պատրաստում	հատ	2.000	62.774	125.55
	Ընդամենը	**100.00**	**%**		**8559.65**
	ԱԱՀ	**20%**			1711.93
	Ընդամենը				**10271.580**

Ս.Ավետիսյան 7/3 շենք

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիքի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ			0.000	0.00
1	Թիթեղյա տանիքածածկի քանդում այդ թվում հարթ թիթեղ,ջրհորդանի թիթեղ /250+24+47,7/մ2	մ²	321.7	0.151	48.45
2	Ջրատար խողովակների քանդում	գմ	31.800	0.167	5.30
3	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ³	7.2	36.260	261.07
4	Շլաքի շերտի քանդում	մ³	10.200	6.346	64.73

5	Տանիքում գոյություն ունեցող աղբի և շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	9.520	2.850	27.14
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0.000	0.00
1	Տանիքածածկի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան նյութով	1մ² մեկուսացվող մակերես	209.260	0.515	107.84
2	Ջերմամեկուսացում 70մմ հաստ.պեռլիտե սալերով	մ²	209.260	3.544	741.69
4	Փայտյա 120x120մմ չորսուներից նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի հենարանների տեղադրում	մ³	0.203	249.988	50.75
5	9մմ հաստ նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի պատրաստում	մ²	6.00	3.854	23.12
6	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում	մ³	5.1320	241.479	1239.27
7	Տանիքածածկույթի պատրաստում КП-21-0,5մմ գունավոր g/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	մ²	250.0	10.471	2617.81
8	Կավարամածի,տախտակ 50x50 -	մ³	1.0500	173.068	181.72
9	Գագաթի տախտակի տեղադրում 250x50	մ²	7.96	9.550	76.02
10	Ջրհորդանի տախտակի տեղադրում 300x50	մ²	19.08	9.550	182.21
11	Ջրհորդանների պատրաստում գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ	գմ	132.00	9.320	1230.24
12	Ջրահեռացման խողովակ 150x150 մմ, գունավոր հարթ ցինկապատ թիթեղից L=11,0մ	կ-տ	4.0	50.945	203.78
13	Գագաթի հարթ ցինկապատ թիթեղ գունավոր 0,5մմ հաստ.	մ²	6.00	6.061	36.36
14	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	61.60	6.061	373.34
15	Ջրատարների տակ եզրակալ գունավոր հարթ ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ.	մ²	15.60	6.061	94.55
16	Մանր ծածկույթներ գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	4.26	6.061	25.82
17	Ձնարգել ցինկապատ գունավոր L=1250մմ	հատ	20.00	4.569	91.38
18	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ³	5.1320	10.911	56.00
19	Կավարամածի, ջրհորդանի,գագաթի տախտակների հակահրդեհային պաշտպանություն	մ²	294.00	0.354	104.10
20	Կավարամածի,ջրհորդանի, գագաթի տախտակների պատում հականեխիչ նյութով	մ²	294.00	1.073	315.37
	Օդափոխության հորանի ծածկոց 2հատ			0.000	0.00
1	Հորանի ծածկոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.02622	112.144	2.94
2	35x35x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	11.000	0.875	9.63
3	50x5 շերտապողպատի արժեքը,	գմ	6.000	1.113	6.68
4	Հարթ գունավոր թիթղ 0,5մմ հաստ. արժեքը,	մ²	2.200	3.990	8.78
5	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	3.000	1.201	3.60

6	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	5.60	6.061	33.94
	Տանիքի մտոց			0.000	0.00
1	Մտոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.01600	115.686	1.85
2	700x700x3 պողպատյա թիթեղի արժեքը,	մ²	0.50	14.849	7.42
3	30x30x3պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.190	0.504	1.61
4	50x50x5 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.200	1.676	5.36
5	Փական	հատ	1.000	3.708	3.71
6	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	2.100	1.201	2.52
	Տանիքի անվտանգության ճաղաշար 31գմ			0.000	0.00
1	Անվտանգության ճաղաշարի տեղադրում	գմ	31.00	0.187	5.79
2	50x5շերտապողպատի արժեքը,	գմ	23.3	1.113	25.87
3	Φ15x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	62.0	0.846	52.42
4	Φ20x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	31.0	0.935	28.97
5	Հեղույս L=220մմ	հատ	62.0	0.748	46.35
6	Ռետինե տափօղակ՝ d=30.0 մմ	հատ	62.0	0.323	20.05
7	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	7.130	1.201	8.56
	Տանիքի պատուհան			0.000	0.00
1	Պատուհանների պատրաստում	հատ	2.000	62.774	125.55
	Ընդամենը	**100.00**	**%**		**8559.65**
	ԱԱՀ	**20%**			1711.93
	Ընդամենը				**10271.580**

Ս. Ավետիսյան 7/4 շենք

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիքի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ			0.000	0.00
1	Թիթեղյա տանիքածածկի քանդում այդ թվում հարթ թիթեղ,ջրհորդանի թիթեղ /250+24+47,7/մ2	մ²	321.7	0.151	48.45
2	Ջրատար խողովակների քանդում	գմ	31.800	0.167	5.30
3	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ³	7.2	36.260	261.07
4	Շլաքի շերտի քանդում	մ³	10.200	6.346	64.73
5	Տանիքում գոյություն ունեցող աղբի և շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	9.520	2.850	27.14
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0.000	0.00
1	Տանիքածածկի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան նյութով	1մ² մեկուսացվող մակերես	209.260	0.515	107.84

2	Ջերմամեկուսացում 70մմ հաստ.պեռլիտե սալերով	մ²	209.260	3.544	741.69
4	Փայտյա 120x120մմ չորսուներից նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի հենարանների տեղադրում	մ³	0.203	249.988	50.75
5	9մմ հաստ նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի պատրաստում	մ²	6.00	3.854	23.12
6	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում	մ³	5.1320	241.479	1239.27
7	Տանիքածածկույթի պատրաստում КП-21-0,5մմ գունավոր g/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	մ²	250.0	10.471	2617.81
8	Կավարամածի,տախտակ 50x50 -	մ³	1.0500	173.068	181.72
9	Գագաթի տախտակի տեղադրում 250x50	մ²	7.96	9.550	76.02
10	Ջրհորդանի տախտակի տեղադրում 300x50	մ²	19.08	9.550	182.21
11	Ջրհորդանների պատրաստում գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ	գմ	132.00	9.320	1230.24
12	Ջրահեռացման խողովակ 150x150 մմ, գունավոր հարթ ցինկապատ թիթեղից L=11,0մ	կ-տ	4.0	50.945	203.78
13	Գագաթի հարթ ցինկապատ թիթեղ գունավոր 0,5մմ հաստ.	մ²	6.00	6.061	36.36
14	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	61.60	6.061	373.34
15	Ջրատարների տակ եզրակալ գունավոր հարթ ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ.	մ²	15.60	6.061	94.55
16	Մանր ծածկույթներ գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	4.26	6.061	25.82
17	Ձնարգել ցինկապատ գունավոր L=1250մմ	հատ	20.00	4.569	91.38
18	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ³	5.1320	10.911	56.00
19	Կավարամածի, ջրհորդանի,գագաթի տախտակների հակահրդեհային պաշտպանություն	մ²	294.00	0.354	104.10
20	Կավարամածի,ջրհորդանի, գագաթի տախտակների պատում հականեխիչ նյութով	մ²	294.00	1.073	315.37
	Օդափոխության հորանի ծածկոց 2հատ			0.000	0.00
1	Հորանի ծածկոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.02622	112.144	2.94
2	35x35x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	11.000	0.875	9.63
3	50x5 շերտապողպատի արժեքը,	գմ	6.000	1.113	6.68
4	Հարթ գունավոր թիթեղ 0,5մմ հաստ. արժեքը,	մ²	2.200	3.990	8.78
5	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	3.000	1.201	3.60
6	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	5.60	6.061	33.94
	Տանիքի մտոց			0.000	0.00
1	Մտոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.01600	115.686	1.85
2	700x700x3 պողպատյա թիթեղի արժեքը,	մ²	0.50	14.849	7.42
3	30x30x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.190	0.504	1.61
4	50x50x5 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	3.200	1.676	5.36
5	Փական	հատ	1.000	3.708	3.71

6	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	2.100	1.201	2.52
	Տանիքի անվտանգության ճաղաշար 31գմ			0.000	0.00
1	Անվտանգության ճաղաշարի տեղադրում	գմ	31.00	0.187	5.79
2	50x5շերտապողպատի արժեքը,	գմ	23.3	1.113	25.87
3	Φ15x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	62.0	0.846	52.42
4	Φ20x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	31.0	0.935	28.97
5	Հեղույս L=220մմ	հատ	62.0	0.748	46.35
6	Ռետինե տափօղակ՝ d=30.0 մմ	հատ	62.0	0.323	20.05
7	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	7.130	1.201	8.56
	Տանիքի պատուհան			0.000	0.00
1	Պատուհանների պատրաստում	հատ	2.000	62.774	125.55
	Ընդամենը	**100.00**	**%**		**8559.65**
	ԱԱՀ	**20%**			1711.93
	Ընդամենը				**10271.580**

Ս. Ավետիսյան 7/5, 7/6 շենքեր

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիքի շին.վերանորոգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ			0.000	0.00
1	Թիթեղյա տանիքածածկի քանդում այդ թվում հարթ թիթեղ,ջրհորդանի թիթեղ /250+24+47,7/մ2	մ²	643.4	0.151	96.91
2	Ջրատար խողովակների քանդում	գմ	63.600	0.167	10.60
3	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների քանդում /հանձնում պատվիրատուին/	մ³	14.4	36.260	522.14
4	Շլաքի շերտի քանդում	մ³	20.400	6.346	129.46
5	Տանիքում գոյություն ունեցող աղբի և շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 7կմ	տն	19.040	2.850	54.27
	Շին.վերանորոգման աշխատանքներ			0.000	0.00
1	Տանիքածածկի գոլորշիամեկուսիչ շերտ 1 շերտ իզոսպան նյութով	1մ² մեկուսացվող մակերես	418.520	0.515	215.68
2	Ջերմամեկուսացում 70մմ հաստ.պեռլիտե սալերով	մ²	418.520	3.544	1483.38
4	Փայտյա 120x120մմ չորսուներից նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի հենարանների տեղադրում	մ³	0.406	249.988	101.50
5	9մմ հաստ նրբատախտակից /ֆաներա/ անցուղիների հատակի պատրաստում	մ²	12.00	3.854	46.24
6	Փայտյա կոնստրուկցիաների տեղադրում	մ³	10.2640	241.479	2478.54
7	Տանիքածածկույթի պատրաստում ԿՊ-21-0,5մմ գունավոր g/պրոֆիլավոր թիթեղից ,կավարամածի պատրաստումով	մ²	500.0	10.471	5235.61

8	Կավարամածի,տախտակ 50x50 -	մ³	2.1000	173.068	363.44
9	Գագաթի տախտակի տեղադրում 250x50	մ²	15.92	9.550	152.04
10	Ջրհորդանի տախտակի տեղադրում 300x50	մ²	38.16	9.550	364.43
11	Ջրհորդանների պատրաստում գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ	գմ	264.00	9.320	2460.49
12	Ջրահեռացման խողովակ 150x150 մմ, գունավոր հարթ ցինկապատ թիթեղից L=11,0մ	կ-տ	8.0	50.945	407.56
13	Գագաթի հարթ ցինկապատ թիթեղ գունավոր 0,5մմ հաստ.	մ²	12.00	6.061	72.73
14	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	123.20	6.061	746.68
15	Ջրատարների տակ եզրակալ գունավոր հարթ ցինկապատ թիթեղ 0,5մմ հաստ.	մ²	31.20	6.061	189.09
16	Մանր ծածկույթներ գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	8.52	6.061	51.64
17	Ձնարգել ցինկապատ գունավոր L=1250մմ	հատ	40.00	4.569	182.75
18	Փայտյա կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանություն	մ³	10.2640	10.911	111.99
19	Կավարամածի, ջրհորդանի,գագաթի տախտակների հակահրդեհային պաշտպանություն	մ²	588.00	0.354	208.19
20	Կավարամածի,ջրհորդանի, գագաթի տախտակների պատում հականեխիչ նյութով	մ²	588.00	1.073	630.73
	Օդափոխության հորանի ծածկոց			0.000	0.00
1	Հորանի ծածկոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տհ	0.05244	112.144	5.88
2	35x35x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	22.000	0.875	19.25
3	50x5 շերտապողպատի արժեքը,	գմ	12.000	1.113	13.35
4	Հարթ գունավոր թիթղ 0,5մմ հաստ. արժեքը,	մ²	4.400	3.990	17.56
5	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	6.000	1.201	7.21
6	Գոգնոց գունավոր հարթ ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	մ²	11.20	6.061	67.88
	Տանիքի մտոց			0.000	0.00
1	Մտոցի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տն	0.03200	115.686	3.70
2	700x700x3 պողպատյա թիթեղի արժեքը,	մ²	1.00	14.849	14.85
3	30x30x3 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	6.380	0.504	3.22
4	50x50x5 պողպատյա անկյունակի արժեքը,	գմ	6.400	1.676	10.73
5	Փական	հատ	2.000	3.708	7.42
6	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	4.200	1.201	5.04
	Տանիքի անվտանգության ճաղաշար 31գմ			0.000	0.00

1	Անվտանգության ճաղաշարի տեղադրում	գմ	62.00	0.187	11.58
2	50x5շերտապողպատի արժեքը,	գմ	46.5	1.113	51.73
3	Φ15x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	124.0	0.846	104.85
4	Φ20x2,5պողպատե խողովակի արժեքը	գմ	62.0	0.935	57.94
5	Հեղույս L=220մմ	հատ	124.0	0.748	92.71
6	Ռետինե տափօղակ՝ d=30.0 մմ	հատ	124.0	0.323	40.10
7	Պողպատյա մասերի ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	14.260	1.201	17.12
	Տանիքի պատուհան			0.000	0.00
1	Պատուհանների պատրաստում	հատ	4.000	62.774	251.09
	Ընդամենը	**100.00**	**%**		**17119.30**
	ԱԱՀ	**20%**			3423.86
	Ընդամենը				**20543.16**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242188010
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1

«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ Լոռու մարզ, գ. Կաթնաջուր 8 Փ/Տ7
ՀՎՀՀ՝ 06974941
Բանկը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ՝ 163138091356
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

Գործընկեր-2

«ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մ. Ավետիսյան փ.29, բն.54
ՀՎՀՀ՝ 05551314
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1570070960900100
Տնօրեն՝ Ս. Հարությունյան
Լիազորված անձ՝ Ա. Մանուկյան

Ա. Մանուկյան ---
/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1.1
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ-ն և «ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ-ն հավաստում է, որ «***ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03***» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Մանուկյան
ասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

«ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Հարությունյան
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրություն

Կ. Տ.

Հավելված թիվ 2
«06» 04 2026թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 7 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգախնայող միջոցառումների կիրառման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	38 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242188010
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1

«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ Լոռու մարզ, գ. Կաթնաջուր 8 Փ/S7
ՀՎՀՀ՝ 06974941
Բանկը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ՝ 163138091356
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

Գործընկեր-2

«ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մ. Ավետիսյան փ.29, բն.54
ՀՎՀՀ՝ 05551314
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1570070960900100
Տնօրեն՝ Ս. Հարությունյան
Լիազորված անձ՝ Ա. Մանուկյան

Ա. Մանուկյան ----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«06» 04 2026թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/03-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45261124/2	Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան 7 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգախնայող միջոցառումների կիրառման աշխատանքներ	-	-	-	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488	44 989 488

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242188010
Համայնքի ղեկավար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր-1

«ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ Լոռու մարզ, գ. Կաթնաջուր 8 Փ/S7
ՀՎՀՀ՝ 06974941
Բանկը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ՝ 163138091356
Տնօրեն՝ Ա. Մանուկյան

Գործընկեր-2

«ԹՐԱՖՖԻՔ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Գյումրի, Մ. Ավետիսյան փ.29, բն.54
ՀՎՀՀ՝ 05551314
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 1570070960900100
Տնօրեն՝ Ս. Հարությունյան
Լիազորված անձ՝ Ա. Մանուկյան

Ա. Մանուկյան ---
/ստորագրություն/
Կ.Տ